ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4819-Ա « 28 » նոյեմբերի 2025թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածով հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունով, 12-րդ կետի 2-րդ ենթակետով՝

1. Երևան քաղաքում միջազգային չափորոշիչներով թենիսի ակադեմիայի ներդրումային ծրագրի մշակման, գնահատման և հաստատման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների, վերլուծական աշխատանքների, հայեցակարգային նախագծերի, էսքիզային և նախագծանախահաշվային փաստաթղթերի, քաղաքաշինական հայեցակարգերի, հատակագծերի, ներդրումային ծրագրերի հայեցակարգերի կազմման, ծրագրերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացների կազմակերպման նպատակով՝ ձևավորել մասնագիտական խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով ձևավորված մասնագիտական խումբը սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել մասնագիտական խմբի ղեկավարին:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
28.11.2025 թ.
N 4819- Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Երևան քաղաքում միջազգային չափորոշիչներով թենիսի ակադեմիայի ներդրումային ծրագրի մշակման, գնահատման և հաստատման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների, վերլուծական աշխատանքների, հայեցակարգային նախագծերի, էսքիզային և նախագծանախահաշվային փաստաթղթերի, քաղաքաշինական հայեցակարգերի, հատակագծերի, ներդրումային ծրագրերի հայեցակարգերի կազմման, ծրագրերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մասնագիտական խմբի

Սոնա Թևանյան	Երևանի քաղաքապետի խորհրդական **/մասնագիտական խմբի ղեկավար/**
Արսեն Մակվեցյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ
Ալիկ Վարդազարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետ
Կարեն Անտոնյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման բաժի պետ
Լուսինե Ջանազյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի մասնավոր գործառնությունների և ռենովացիոն ծրագրերի ղեկավար
Մանանա Սերոբյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի Զարգացման և ներդրումային ծրագրերի օգնական

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**